

**Նաիրա ԳԱՍՊԱՐՅԱՆ**  
Երևանի պետական համալսարան

**ՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒՅԹԸ  
ՇՈՏԼԱՆԴԱԿԱՆ ԱՌԱԾ-ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐՈՒՄ**

Հասկացույթի վերլուծությունը ամենանպատակահարմար մեթոդն է, որը թույլ է տալիս ազգային իմաստությունն ու արժեքները ներկայացնել մտքի բովանդակային ամբողջականության մեջ: Լեզվաճանաչողական և լեզվամշակութային դիրքերից քննության են առնված շտրանդական առած-ասացվածքները, որտեղ առանցքային են *home/hame, man, success, woman/ mother, friend, children/bairns, wit, devil, peace, bread, God, bird* հասկացույթները: Հոդվածի նպատակն է քննության առնված հասկացույթների միջոցով ցույց տալ, որ նշված միավորները շտրանդական լեզվամշակույթում էթնիկական ու հոգեբանական գործոնների ազդեցությամբ ձեռք են բերում շտրանդացու հոգեկերտվածքն ու արեժեհամակարգը բնութագրող բաղադրիչների կարգավիճակ, ընդհանուր համամարդկային արժեքների հիմքի վրա առանձնացնում հին շտրանդացու արժեհամակարգն ու ինքնությունը, ընդգծում նրա և այլ ազգերի միջև գոյություն ունեցող մշակութային տարբերությունները:

**Բանալի բառեր.** *հասկացույթ, լեզվաճանաչողություն, լեզվամշակույթ, շտրանդացի, արժեհամակարգ, դարձվածքներ*

Համաձայն ճանաչողական մոտեցման՝ հասկացույթն իր էությանը առնչվում է մտածողությանը: Հասկացույթը երեք հիմնական բաղադրիչների միասնությունն է. դրանք են՝ պատկերված առարկան, տեղեկատվությունն այդ առարկայի բովանդակության վերաբերյալ, պատկերված առարկայի ընկալման դաշտը: Վորոնեժյան գիտական դպրոցի ներկայացուցիչները /Попова, Стернин, 2007/ պատկերված առարկայի գոյությունը բացատրում են «առարկայական կողմի նյարդալեզվաբանական բնույթով, այսինքն զգայական պատկերը կողավորում է հասկացույթը՝ ձևավորելով ընդհանրական առարկայական կողմի միավոր»: Այդ մոտեցման շատագուցները գտնում են, որ առարկայի զգայական պատկերը կարող է հիմնվել ընկալման վրա՝ ձևավորվելով զգայական օրգանների ազդեցությամբ, և կարող է լինել ճանաչողական՝ ձևավորվելով շտրանդիկ առարկայի կամ երևույթի փոխաբերականացման: Հասկացության տեղեկատվական բովանդակությունը ներառում է որոշակի ճանաչողական հատկանիշներ, որոնք բնութագրում են տվյալ հասկացույթի՝ առարկայի կամ երևույթի հիմնական գծերը:

Մեկնաբանման դաշտը ձևավորվում է այն ճանաչողական հատկանիշների ազդեցությամբ, «որոնք մեկնաբանում են հասկացույթի հիմնա-

կան բովանդակությունը այս կամ այն տեսակետից, բխում են նրանից իբրև եզրահանգում կամ գնահատական» /Попова, Стернин, 2007: 82/: Առկա է նաև այն տեսակետը, որ հասկացույթի ուսումնասիրության հարցում ամենաէականը մշակութաբանական մոտեցում ցուցաբերելն է: Ըստ այդ տեսակետի ողջ մշակույթը հասկացույթների և այդ հասկացույթների հարաբերությունների բազմություն է: Այս տեսության հետևորդները /Карасик, 1996; Степанов, 1997/ հասկացույթը դիտարկում են իբրև մարդու հոգեկերտվածքում գործող մշակույթի հիմնական բջիջ: Ստեպանովը հասկացույթի կազմը ներկայացնում է շերտերի տեսքով, որոնք, հասկացույթի համաչափ զարգացմամբ՝ սկսած ժամանակակից շրջանից, իրար են միահյուսվում. այդ շերտերն են՝ 1) հիմնական ակտիվ հատկանիշը, 2) լրացուցիչ պասսիվ հատկանիշը կամ հատկանիշները, 3) արդեն չգիտակցվող ներքին ձևը, որն իր արտահայտությունն է գտել հասկացույթի բառային ներկայացմամբ: Անդրադառնալով հասկացույթների գոյության հարցին՝ Յու. Ս. Ստեպանովը նշում է, որ հասկացույթները բոլոր շերտերում տարբեր կերպ են դրսևորվում տվյալ մշակույթի ներկայացուցիչների համար: «Ակտիվ» շերտում (հիմնական հատկանիշ) հասկացույթը, որպես շփման և փոխըմբռնման միջոց, գոյություն ունի տվյալ լեզվի բոլոր լեզվակիրների համար: Իր բովանդակության «պասսիվ» (լրացուցիչ) հատկանիշներում հասկացույթը ակտուալ է միայն որոշ սոցիալական խմբերի համար: Ներքին ձևը կամ ծագումնաբանական հատկանիշը բացահայտվում է միայն հետազոտողի համար, հետազոտողի կողմից: Տվյալ լեզուն օգտագործողների համար այս շերտը գոյություն ունի միջնորդավորված՝ իբրև հիմք, որի վրա առաջացել և հիմնվում են մնացած իմաստային շերտերը /Степанов, 1997/: Անհրաժեշտ է նշել, որ հասկացույթի ընկալման հարցում լեզվաճանաչողական և լեզվամշակութային մոտեցումները իրարամերժ չեն: Ըստ Վ. Ի. Կարասիկի այս մոտեցումները տարբերվում են իրենց ուղղություններով. լեզվաճանաչողական հասկացույթը ուղղված է անհատի գիտակցությունից դեպի մշակույթ, իսկ լեզվամշակութային հասկացույթը մշակույթից ուղղվում է դեպի անհատի գիտակցություն: Կարասիկը նշում է, որ շարժումը ներսից դեպի դուրս և դրսից դեպի ներս ընդամենը հետազոտական մեթոդ է, որն իրականում ամբողջական բազմաչափ գործընթաց է /Карасик, 2004: 117/: Հետազոտողներից շատերը, այդ թվում Վ. Ի. Կարասիկը, գտնում են, որ հասկացույթը առնվազն եռաչափ երևույթ է, ընդ որում այդ երեք բաղադրիչների հարաբերակցությունը կարող է տարբեր լինել: Հասկացույթի կառուցման վերաբերյալ մոտեցումները փոխադարձաբար լրացնում են իրար, իսկ այս կամ այն տեսակի կիրառությանը տրվող առաջնությունը պայմանավորված է հետազոտության նպատակներով ու խնդիրներով:

Լեզվամշակութային վերլուծության տեսանկյունից նպատակահարմար է այն կառույցի դիտարկումը, որի բաղադրիչներն են՝ հասկացու-

թյունը, պատկերը<sup>1</sup> և արժեքները: Ըստ Վ. Ի. Կարասիկի նշված եռամիասնության գազաթում տեղակայվում է «արժեքային բաղադրիչը», քանի որ, նախևառաջ, արժեքներն են ուղղորդում մարդկանց վարքը և աշխարհի պատկերի զգալի մասը հիմնվում է հենց արժեհամակարգի վրա: Վերոհիշյալ բաղադրիչին՝ արժեքներին առաջնայնություն տալը պայմանավորված է ազգային հասկացույթների ողջ բազմության սերտ փոխկապվածությամբ, որը թույլ է տալիս վերականգնել ամբողջական արժեհամակարգը՝ վեր կանգնելով մեկ հասկացույթի վերլուծությունից: Լեզվամշակութային հասկացության հասկացական դաշտը կազմված է որոշակի կայուն բովանդակությունից և հիշողության դրվագներից, որոնք ներառում են փորձ և գիտելիք, որոնք մարդը ձեռք է բերել ազգային մշակույթ ունեցող հասարակության մեջ պատմական զարգացման և սոցիալական գործունեության ընթացքում: Լեզվամշակութային հասկացույթի պատկերային-առարկայական բաղադրիչը բնութագրվում է իր կառուցվածքի միջոցով /Карасик, 1996; Карасик, Слышкин, 2001/: Ի հակակշիռ այս դիրքորոշման, ըստ Ս. Գ. Վորկաչովի լեզվական գիտակցության մեջ կան հասկացույթներ, որոնք զերծ են արժեքային բաղադրիչից, չեն առաջացնում հույզեր և ապրումներ: Ս. Գ. Վորկաչովն առանձնացնում է հասկացույթի էթնոմշակութային բաղադրիչը և գտնում է, որ հասկացույթների ուսումնասիրությունն հիմնականում միտված է «ուսումնասիրվող օբյեկտի տարբերակիչ հատկանիշների վերհանմանը, նրա էթնոմշակութային առանձնահատկությունների հաստատմանը, որը կարող է ունենալ տարբեր, ոչ միանշանակ ընկալումներ» /Воркачев, 2003/:

Ս. Գ. Վորկաչովը փորձել է ներկայացնել հասկացույթի վերաբերյալ համընդհանուր մոտեցումը և տալ նրա լեզվաբանական սահմանումը: Նրա դիրքորոշումը հարցի վերաբերյալ տանում է դեպի այն եզրահանգմանը, ըստ որի «հասկացույթը խմբային գիտելիքի կամ գիտակցության՝ բարձրագույն հոգևոր արժեքներին ուղղված միավոր է, որն ունի լեզվական դրսևորում և բնութագրվում է էթնոմշակութային առանձնահատկություններով» /Воркачев, 2003: 6-7/:

Հոդվածում քննության առնված *home/hame, man, success, woman/ mother, friend, children/bairns, wit, devil, peace, bread, God, bird* հասկացութային բաղադրիչ պարունակող դարձվածաբանական միավորների ուսումնասիրությունը տարվում է իմաստա-կառուցվածքային և էթնոմշակութային առանձնահատկությունների հիմքի վրա: Վերլուծությունը բացահայտում է, որ հասկացույթն արժևորվում է ազգային, մշակութային և ճանաչողականի սահմաններում և ժամանակի ընթացքում ենթարկվում է փոփոխության՝ համաշխարհային փոփոխություններին զուգընթաց: Հասկացույթները լավագույնս դառնում են ընկալելի ու փոխանցելի լեզվի շնորհիվ՝ խոսքի միջոցով: Հասկացույթը ճանաչողական լեզվաբանության առանցքային հասկացություններից է, որն արտացոլում է մարդու ճանաչողական փորձը իր ողջ հարստության և տարատեսակու-

թյան մեջ: Ռ.Ի. Պավլիենիսը հասկացույթը դիտարկում է իբրև ամբողջ հասկացութային համակարգի մաս, այսինքն՝ «այն, ինչ անհատը մտածում, պատկերացնում, ենթադրում է, գիտի աշխարհի առարկաների մասին:» Ռ. Ի. Պավլիենիսն համամիտ է, որ հասկացությունները կարող են արտահայտվել ինչպես բառույթներով, այնպես էլ դարձվածքներով: Դարձվածքներով արտահայտված հասկացությունները չեն տարբերվում բառույթներով առկայացված հասկացություններից, քանի որ երկուսն էլ միևնույն ճանաչողական կառույցների միջոցով են դրսևորվում /Павилёнис, 1983: 286/: Դարձվածքի լայն ըմբռնման համաձայն այդ միավորները ներառում են հազարամյակների ընթացքում ժողովրդի կողմից ստեղծված առած-ասացվածքներն ու թևավոր խոսքերը: Լեզվի գանձարանի անքակտելի մաս կազմող դարձվածքները առավելագույնս նպաստում են որևէ լեզվամշակույթը հասկանալուն, քանի որ յուրաքանչյուր դարձվածաբանական միավոր լեզվի և ազգային մշակույթի միջոցով է նպաստում աշխարհընկալմանը: Հետազոտողներն հաճախ այն կարծիքն են հայտնում, որ նման ուսումնասիրությունը կարող է օգնել հասկանալու տվյալ անհատի կամ հանրության հոգեկերտվածքն ու մշակութային արժեքները: Ուշադրության արժանի է այն փաստը, որ ազգի հոգեկերտվածքն ու ազգային արժեքների ընդհանուր բնութագիրն ի հայտ են գալիս ազգային առածների ու թևավոր խոսքերի միջոցով:

*Home/hame, man, success, woman/mother, friend, children/bairns, wit, devil, peace, bread, God, bird* հասկացությունների լեզվաճանաչողական և լեզվամշակութային քննություն

Սույն հոդվածի սահմաններում փորձ է արվում նաև հաստատելու շրջանառվող այն միտքը, որ ազգի մասին կարելի է տեղեկատվություն ստանալ ուսումնասիրելով տվյալ ազգի դարձվածաբանական միավորները:

Դիտարկենք մի քանի օրինակ շոտլանդական առած-ասացվածքներից:

*A fey man and a cursour fearna the deil. Սատանան չի վախեցնի ճակատագրով (մահվան դատապարտված մարդուն ու մարտական ձիուն):*

Նախադասության բառացի թարգմանությունն ազդարարում է, որ **deil** (սատանա) գոյականը համատեքստում ունի բացասական երանգավորում և ընկալվում է ինչպես **անխուսափելի չարիք, չարիքի մարմնավորում** բառարանային իմաստով, այնպես էլ փոխաբերական՝ **մահ** իմաստով, որը չարիքի բարձրագույն դրսևորումն է: **Մարդ** հասկացութային ընկալվում է ուղիղ բառարանային իմաստով, իսկ իբրև վերոբերյալ նախադասություն-ասացվածքի հոմանիշ կարող է ծառայել **Ջուրը մտնող ջրից չի վախենա** դարձվածքը: Ժողովրդական այս իմաստությունը, ձևավորված իբրև անհատական փորձի գումարային հավաքական հան-

րային արդյունք, բովանդակային առումով չի հակասում համամարդկային փորձին:

*Bread* հասկացույթի քննությունը հաջորդ օրինակում ընդհանրացնում է համամարդկային փորձն ու գիտելիքը, շեշտելով, որ դրանք ձեռք են բերվել ազգային մշակույթ ունեցող հասարակության մեջ ապրելիս՝ պատմական զարգացման և սոցիալական գործունեության ընթացքում:

*Bannocks are better than nae bread.* “Half a loaf is better than no bread.”

*Առանց թթխմոր թխված սմբած, չոր կես հացը գերադասելի է անհաց մնալուց:*

Նշվածի հոմանիշն է *bread* հասկացույթի կիրառմամբ ներկայացվող մեկ այլ ասացվածք - *Bread and cheese is gude to eat when folk can get nae ither meat:* *Հաց ու պանիր ուտելն էլ լավ է, եթե մարդ միս չի ճարում:* Նշված երկու դեպքում էլ համատեքստից դուրս ասվածը կարելի է ընկալել ուղիղ իմաստով, մինչդեռ որոշակի համատեքստում երկուսն էլ կարելի է ընկալել փոխաբերական իմաստով:

Ներքոբերյալ օրինակում կիրառված ժողովրդական իմաստության այս նմուշը՝

*Better eat brown bread in youth than in eild.* *Լավ է ջահել ժամանակ սև հաց ուտել քան՝ ծերության...*

դարձյալ հավաքական փորձի արդյունք է և ամենևին էլ չի վերաբերում հաց ուտելուն, քանի որ *bread* հասկացույթը փոխաբերականության հիմքի վրա *brown bread* կապակցության մեջ ստանում է նոր իմաստ՝ **ավելի նախընտրելի է դժվարություններն հաղթահարել երիտասարդ տարիքում ու ծերության շրջանն առանց խնդիրների անցկացնել:**

Քննության ենթակա հաջորդ միավորում *bread* առանցքային բաղադրիչը առատության խորհրդանիշ է.

*Breads house skail'd never. A full of hospitable house never wants visitors. Տաշտը հացով լի տունը այցելուներ չի սիրում:*

Հայտնի բան է, որ առատության մեջ ապրող հարուստը (հաց ունեցողը) իր հացն ուրիշի հետ չի ուզում կիսել. դա հատուկ է հարուստ, բայց ազահ մարդկանց:

Վերը նշված օրինակի մեջ նպատակահարմար ենք գտել բառացի թարգմանության փոխարեն ներմուծելու *տաշտը հացով լի* տարբերակը՝ ոճն ու ժողովրդական կոլորիտը պահպանելու համար: Հայերեն տարբերակում ավելի ընդունելի ենք համարում հենց այս թարգմանությունը, որը ստեղծում է համարժեքություն: Այսպիսով, տարբերություններն հաճախ ի հայտ են գալիս ճանաչողական և էթնոմշակութային մակարդակներում: Լինում են դեպքեր, ինչպես, օրինակ՝ *Assurance is two-thirds of success* դարձվածքը, երբ հայերեն տարբերակի հետ համեմատելիս բացահայտում ենք, որ պատմամշակութային գործոնը խոր հետք է թողել: Եթե շոտլանդացու համար հաջողության գրավականը ինքնավստահ գործելակերպն է՝ **վստահ լինելը հաջողության երկու-երրորդն**

է, ապա հայ ինքնությունը բնութագրելիս չպետք է անտեսել ռիսկի բաժինը, որովհետև **ռիսկը գործի կեսն է**: Ըստ էության, հայի խիզախությունը բնութագրվում է հնարավոր վտանգն արհամարհելու ունակությամբ, մինչդեռ շոտլանդացին վտանգի մասին չի մտածում՝ նրան օգնում է ինքնավստահությունը: Թերևս դա կարելի է բացատրել ելնելով պատմական զարգացումներից՝ հայը միշտ ստիպված է եղել պատրաստ ու աջալուրջ լինել օտար նվաճողի խարդավանքներին: Պատմամշակութային տարբերությամբ պայմանավորված երկու լեզուներում ճանաչողական հիմքի վրա ընդգծվում են տարբեր հասկացություններ, որոնք, սակայն, մատնացույց են անում միևնույն հատկանիշը՝ խիզախությունը: **Ճակատագրով/ մահվան դատապարտվածն** ու **ինքնավստահություն ցուցաբերողը**, նաև վտանգն արհամարհողը հաջողելու համար միայն խիզախություն պիտի ցուցաբերեն, այլ ելք չունեն: Նշված դարձվածքներում էական դերը պատկանում է թվականներին՝ շոտլանդացու դեպքում **երկու-երրորդն է**, հայի դեպքում՝ **կեսը**: Քանի որ հայի փորձը ձեռք է բերվել օտար նվաճողի դեմ անընդհատ պայքարի պայմաններում, նա չի ակնկալում հաջողություն առանց ռիսկի՝ դա նրան կյանքն է սովորեցրել: Ի տարբերություն հայի, շոտլանդացին չի մտածում ռիսկի մասին, նրա համար էականը վստահ քայլերով դեպի նպատակը գնալն է:

Ներքոբերյալ օրինակում առաջին հայացքից կարևոր են թվում *man u horse* գոյականները, սակայն իմաստային առումով առանցքային է *hame* հասկացույթը.

*A fu' man and a hungry horse aye mak haste hame. Կուշտ մարդն ու սոված ձին ուզում են շուտ փուն հասնել:*

*Man u horse* հասկացույթները կիրառվել են իրենց բառարանային իմաստներով: Ըստ շոտլանդացու փորձի կուշտ մարդը տուն է շտապում, որովհետև աշխատել այլևս չի կարողանում և հանգստանալու կարիք ունի, իսկ ձին սնունդ ընդունելու կարիք ունի: Այնուամենայնիվ, առանցքային է *hame* հասկացույթը, քանի որ միայն տունն է, որ մարդուն տալիս է լիցքաթափվելու, հանգստանալու հնարավորություն, ապահով լինելու զգացում: Համամարդկային արժեք է ընտանիքի անդամ համարվող ընտանի կենդանիների նկատմամբ հոգ տանելու ունակությունը: Մարդուն ծառայող սոված կենդանին ակնկալում է, որ տանն անպայման որոշակի վերաբերմունքի կարժանանա: Պատկերը վկայում է նաև, որ շոտլանդացուն բնութագրական է ոչ միայն աշխատասիրությունը, այլև բարությունն ու հոգատարությունը իրեն անտրտուն ծառայող կենդանու նկատմամբ:

Դիտարկենք հաջորդ օրինակը՝

*A tocherless dame sits lang at hame.*

**Անօժիպ աղջիկը (հոր) փանը երկար է մնում:**

*Hame* հասկացույթը *sits lang at hame / փանը երկար է նստում/ մնում* դարձվածքն ընկալվում է հետևյալ կերպ՝ **երկար ժամանակ ոչ ոք նրան ամուսնության առաջարկ չի անում: Hame/home հասկացույթը sit բայա-**

**Կան անդամի հետ կազմում է** բառարանային ուղիղ իմաստով միավոր՝ **տանից դուրս չգալ**, իսկ կոնկրետ առածի մեջ գործածվում է փոխաբերական իմաստով որպես դարձվածաբանական միավոր *նստել/ մնալ (հայրական) տանը*: Բովանդակային պլանում ծանոթանում ենք տվյալ ժամանակահատվածում Շոտլանդիայում տիրող բարքերին, երբ աղջկա օժիտը որոշիչ դեր էր խաղում ամուսնության առաջարկ անելիս: Դարձվածքը անուղղակիորեն հուշում է, որ աղջկա օժիտ ունենալ-չունենալով կարող է պայմանավորված լինել նաև աղջկա ամուսնության հարցը:

Մայրական շրջահայացությունն ու կենսափորձը իրենց նպաստն են բերում զավակի բարօրությանը: Շոտլանդացու համար զավակի նկատմամբ տածած մայրական անսահման սերն ու խորհուրդը գերադասելի են հոգևորականի ծանրակշիռ խորհրդատվությունից, քանի որ գործվագույթ մայրը բոլորից շատ է մտահոգված իր զավակի համար և զավակի անհաջողությունն ամենից առավել մոր սիրտն է խոցում:

*An ounce o' mither-wit is worth a pound o' clergy. Մոր տված ամենաաննշան խորհուրդը կղերականի ծանրակշիռ խորհրդից ավելին արժե:*

Շոտլանդացին արժևորում է խելքը, մտքի ամեն փայլատակում, սակայն զոր ու գիշեր սերտելը նրան խելացի չի դարձնի (*An ounce o' wit is worth a pound o' lear.*), եթե մարդը խելք չունի:

Առածի խորքային իմաստը շատ մեծ տեղեկատվություն է պարունակում՝ աստծուն հավատացող շոտլանդացին իրատես է և կղերականին չի նույնացնում աստծո հետ:

*God* հասկացույթի կիրառման նրբերանգները ի հայտ են գալիս հետևյալ առած-ասացվածքների վերլուծություններից:

*God keep ill gear out o' my hands; for if my hands ance get it, my heart winna part wi't, sae prayed the gude Earl of Eglinton. God keep the cat out o' our gate, for the hens canna flee. God ne'er measures men by inches. God ne'er sent the mouth, but he sent the meat wi't. Տեր փրկիր կասկածելի հարստությունից, քանզի հենց անազնիվ վաստակ ընկնի ձեռքս, սիրտս կհրաժարվի ընդունել, այսպես էր աղոթում էգլինթոնի բարի կոմսը: Կատուներին հեռու պահիր մեր դարպասից, Տեր, քանզի մեր հավերքը թռչել չգիտեն...*

*God's aye kind to fu' folk and bairns. As instanced by the marvellous manner in which men escape injury while under the influence of drink. Աստված միշտ ինչ-որ հրաշքով օգնության ձեռք է մեկնում խմած մարդկանց ու երեխաներին:*

*God sends men claiith as they hae cauld. God send us siller, for they're little thought o' that want it. Աստված հոգում է, որ մրսող մարդն առանց հագուստի չմնա, Աստված տեսնում է, թե ով է կարիքի մեջ ու նրան արծաթ/ապրուստի միջոց է ուղարկում:*

*God sends fools fortunes. Աստված հարստությունը հիմարին է տալիս:*

*God sends meat and the deil sends cooks. Աստված միսն է ուղարկում, սատրանան՝ խոհարարին:*

Հետաքրքրական է, որ լրջորեն չընկալելով կղերականությանը՝ շոտլանդացին ընդունում է աստծո գոյությունը և փորձում իրատեսորեն ըմբռնել աստծո գործերի տրամաբանությունը:

Շոտլանդացու իրատեսությունն ակնհայտ է դառնում նաև հետևյալ առածից, որտեղ առանցքային հասկացույթը *birds* գոյականական բաղադրիչն է.

*Bonny birds are aye the warst singers.*

Բառացի թարգմանությամբ՝ **Սիրուն թռչնակը ամենավար երգիչն է**, այսինքն արտաքինն ու ներքինը հաճախ ներդաշնակ չեն: Ակնկալել, որ տեսքն ու գործը պիտի համահունչ լինեն՝ սխալ է, հաճախ դրանք հակասում են իրար: Հետաքրքրական է, որ ժամանակակից շոտլանդացին այս առածի գոյության մասին չգիտի, գուցե դա պայմանավորված է բազմաթիվ բարբառների առկայությամբ: Փոխարենը գործածվում է նույնիմաստ *Attractiveness is idle; All that glistens isn't gold. (Ամեն փայլող բան ոսկի չէ):* Շոտլանդական ազգային իմաստությունը վկայում է, որ նրա էթնոմշակութային առանձնահատկություններից է հարցերին մակերեսային մոտեցում չցուցաբերելը, ձեռք բերած կենսափորձից դասեր քաղելը: Դիտարկենք ներքոբերյալ օրինակը.

*Before ye choose a friend, eat a peck o' saut wi' him. Մարդու հետը ընկերացիր դժվարին ուղի անցնելուց հետո միայն:*

Բառացի թարգմանությամբ՝ *ընկերանալուց առաջ մի զամբյուղ աղ կեր հետը*: Այստեղ հարկ ենք համարում անդրադառնալ մի շատ տարածված երևույթի՝ **հասկացութային փոխաբերությանը**, որը ստեղծվում է լեզվական մտածողության պատկերային հիմքի վրա, երբ տեղի է ունենում մեկ իմաստային ոլորտի հասկացական կառույցների արտապատկերում մեկ այլ իմաստային ոլորտում (*an ounce o' wit, a pound o' lear, eat a peck o' saut*):

Կյանքի փորձը բերել է շոտլանդացուն այն համոզման, որ *խաղաղությունը գալիս է ամենաթեժ պատերազմից հետո (Hotter war sooner peace.)* և *մարդը խաղաղ կապրի, եթե զենք ունենաս (Weapons bode peace.)*, քանի որ *խաղաղության փոխաբերությունը կախված է հարևանի կամքից (Nae man can live langer in peace than his neighbours like.):* Շոտլանդացու կարծիքով **պատերազմի ձգտում է նա, ով երբեք չի փորձել այն (War's sweet tae them that never tried it.):** Վերը քննարկվածը փաստում է, որ համամարդկային արժեքները կարող են համընկնել ազգայինի հետ, սակայն հայտնի է, որ աշխարհի ոչ բոլոր ազգերն են ձգտում զենքն օգտագործել խաղաղություն հաստատելու համար: Համեմատության համար ասվածը լուսաբանենք՝ մեջ բերելով թուրքերի թևավոր խոսքերից և մեր մոտեցումը հարցին միանգամայն պարզ կդառնա: Թուրքի յուրահատուկ մոտեցումը սկզբունքորեն տարբեր է: Դա կարելի է հասկանալ քննության առնելով հետևյալ թևավոր խոսքերն ու ասացվածքները.



**1. Թուրքը ծերանում է, բայց թուրը չի թերանում:**

Ո՛չ խաղաղ սպեղծարար կյանքը, ո՛չ փարիքն ու համամարդկային արժեքները չեն ազդում թուրքի վարքի վրա:

**2. Թուրքի աչքը արյան կարմրի մեջ է լինում:**

Թուրքը եղել է վայրագ ու էլի ծարավ է արյան:

**3. Սպանիր, փոխհատուցիր:**

Հարցերը կարող են լուծվել միմիայն վրեժխնդրությամբ՝ սպանելով:

**4. Արյուն հեղիր, օրենք մի հաստատիր/կատարիր:**

Թուրքը պատրաստ է արյունահեղության, բայց երբեք չի ցանկանում ապրել և գործել օրենքի շրջանակում, նա ինքն է սպեղծում իր օրենքը, որը համամարդկայինի ճիշտ հակառակն է:

**5. Բռնության թևը չի ծալվի:**

Բռնությունն է որոշում ելքը, բռնությունն այլընտրանք չունի և պատրաստ է գնալ մինչև հարցի վերջնական լուծում:

**6. Մի՛ մեռիր, մեռցրո՛ւ, մի՛ սսկվիր, սսկեցրո՛ւ:**

Թուրքը խաղաղասեր շոտլանդացու նման չէ, նա հարձակվում է, իսկ նման վարքը հատուկ է միայն վախկոտին ու արյան ծարավից տոչորվողին:

**7. Սատանան բազմաթիվ դեմքերով է հանդես գալիս. դրանցից գլխավորը թուրքինն է (ասորական):**

**8. Մարդիկ կառուցում են, թուրքերը՝ քանդում (սերբական):**

**9. Աքլորը ձու է ածի, թուրքը մարդ չի դառնա (ռումինական):**

Թուրքը հոմանիշն է ամեն բացասականի: Սա յուրօրինակ դրսևորումն է նախահարձակ ու ռազմատենչ քաղաքականության, որը տեղ չունի խաղաղասեր ազգերի լեզվամշակութային ժառանգության մեջ: Թուրք իրականության մեջ ագրեսիվությունն ու կարգ ու կանոնին չենթարկվելը միշտ եղել են հպարտության առարկա և դիպուկ բնութագրում են թուրքի հոգեկերտվածքը: Քրիստոնեական լեզվամշակույթը ագրեսիվություն ներկայացնող միավորներ չի կարող պարունակել: Այսպիսի դրսևորումներից զերծ են թե՛ շոտլանդական և թե՛ հայկական լեզվամշակույթները:

Վերլուծություններից կարելի է եզրահանգել, որ հոգեկերտվածք և ազգային մտածելակերպ ներկայացնող դարձվածքները և նրանց բաղադրիչ առանցքային հասկացույթներն իրացվում են որոշակի բառապաշարի միջոցով, որը սակայն չի բացառում լեզվի ընդհանուր գործածական միավորների առկայություն<sup>2</sup>: Հոգվածում քննության առնված ճանաչողական արժեք ունեցող հասկացույթներում արտացոլված են կրկնվող իրավիճակ ներկայացնող փորձով ստացված և այդ փորձը նկարագրող տեքստի վերաբերյալ գիտելիքները, որոնք բնութագրվում են որոշակի հոգեվիճակների դրսևորմամբ և մտապահվում են մարդկանց հիշողության մեջ իբրև մոդելներ՝ ընդհանուր համամարդկային արժեքների հիմքի վրա առանձնացնելով շոտլանդացու արժեհամակարգը:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ֆ. Լասառո Կառետերը իր «Բանասիրական տերմինների բառարանում» նշում է, որ «պատկերը շատ հաճախ նույնականանում է փոխաբերության հետ կամ էլ այս տերմինի տակ ընկալվում են այն անիրական, երևակայական տարրերը, որոնք ի հայտ են գալիս բացահայտ համեմատության կամ այլաբանության կազմում» /Lázaro Carreter, 1998/:
2. Հոգեկերտվածքին հատուկ բառապաշարի կիրառումը, ըստ Ե.Ա. Սելիվանովայի, խնդիրը տեղափոխում է ֆրեյմի տեսության դաշտ: Ֆրեյմները ճանաչողական գիտության մեջ կիրառվում են տեղեկատվությունն ամրագրելու համար: Նա բնութագրում է ֆրեյմը որպես գիտելիքի փոփոխության և նկարագրման համար նախատեսված մոդել, որը, պահպանվելով հիշողության մեջ, ապահովում է հաճախակի կրկնվող իրավիճակների համապատասխան ճանաչողական մշակում: Ֆրեյմները ներմուծվում են տեքստի հասկացման ընթացքում, երբ մեկնաբանողը փորձում է դրանք գտնելու նպատակով ակտիվացնել իր հիշողությունը՝ տեղադրելով հատվածի բովանդակությունը արդեն հայտնի, տեքստից դուրս գործող մոդելի մեջ /Селиванова, 2000: 101/:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Воркачев С. Г. Концепт как «зонтиковый термин» // *Язык, сознание, коммуникация*. Вып. 24. М.: Макс Пресс, 2003. URL: // <http://lincon.narod.ru/umbrella.htm> (Дата обращения: 12.12.2018)
2. Карасик В. И. Языковая личность: культурные концепты // *Культурные доминанты в языке*. Волгоград, Архангельск: ВГПУ Перемена, 1996.
3. Карасик В. И., Слышкин Г. Г. Лингвокультурный концепт как единица исследования // *Методологические проблемы когнитивной лингвистики*. Воронеж: ВГУ, 2001.
4. Карасик В. И. Языковой круг: личность, концепты, дискурс. М.: Гнозис, 2004.
5. Павилёнис Р.И. Проблема смысла: современный логико-философский анализ языка. М.: Мысль, 1983.
6. Полиниченко Д. Ю. Концепт «язык» в английской паремиологии // *Язык, сознание, коммуникация*. Вып. 26. М.: Макс Пресс, 2004.
7. Попова З. Д., Стернин И. А. Когнитивная лингвистика. М.: Восток-Запад, 2007.
8. Селиванова Е. А. Когнитивная ономаσιология. Киев: Изд. украинского фитосоциологического центра, 2000.
9. Степанов Ю. С. Константы. Словарь русской культуры. М.: Языки русской культуры, 1997.

10. Hislop A. The Proverbs of Scotland. Edinburgh: Alexander Hislop & co., 1868.
11. Lázaro Carreter F. Diccionario de términos filológicos. Madrid: Biblioteca Románica Hispánica Editorial Gredos, 1998.
12. Ray J. A Collection of English Proverbs // [https://books.google.com/books/about/A\\_Collection\\_of\\_English\\_Proverbs.html?id](https://books.google.com/books/about/A_Collection_of_English_Proverbs.html?id) (Retrieved 02.07.2018)

**Н. ГАСПАРЯН – Когнитивно-культурный концепт в шотландских пословицах и поговорках.** – Концептуальный анализ паремиологических единиц с базовым концептуальным компонентом *home/hame, man, success, woman/mother, friend, children/bairns, wit, devil, peace, bread, God, bird* показывает, что упомянутые паремиологические единицы являются носителями шотландских национальных ценностей. Применение метода концептуального анализа на лингво-культурном и лингво-когнитивном уровнях позволило выявить национальные ценности и истинный менталитет шотландцев. Установлено, что национальные ценности шотландцев не противоречат общечеловеческим ценностям. Они формируются как результат моделированных знаний группового этнического позитивного опыта.

**Ключевые слова:** концепт, лингвопознание, лингвокультура, шотландцы, национальные ценности, паремиология

**N. GASPARYAN – The Cognitive-Cultural Concept in Scottish Proverbs and Sayings.** – The conceptual analysis of paremiological units, having *home/hame, man, success, woman/mother, friend, children/bairns, wit, devil, peace, bread, God, bird* as their basic conceptual component, on a firm linguocultural and linguocognitive bases, shows that Scottish paremiological units were formed on the basis of national values and wisdom. The true method of such analysis is the conceptual one whose task is to present national values and mentality in the completeness of thought. Thus, Scottish national mentality, values and wisdom become highlighted on general human values as a result of the knowledge obtained by this ethnic group's positive experience. This knowledge is memorised in the form of patterns.

**Key words:** concept, linguocognition, linguoculture, Scottish values, paremiology

**Ներկայացվել է՝ 12.02.2019**  
**Երաշխավորվել է ԵՊՀ Անգլիական բանասիրության ամբիոնի կողմից**  
**Ընդունվել է տպագրության՝ 25.04.2019**